ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 2-Լ

«09» 01 2024 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի Ն 39 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ 2024 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածը, որի հիման վրա այսուհետ նախաքննությունն իրականացվելու է 2 քննչական մարմինների՝ ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից, իսկ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչության գործունեությունը դադարեցվել է: Նման պայմաններում անհրաժեշտ է իրականացնել համապատասխան կառուցվածքային փոփոխություններ ՀՀ գլխավոր դատախազության համակարգում՝ նպատակ ունենալով ապահովել մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողական և վերահսկողական գործառույթների պատշաճ իրականացումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասի 8-րդ կետով, 21-րդ հոդվածով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության գործունեությունը դադարեցնել և միաձուլման եղանակով ստեղծել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն:

2. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն աջակցող բաժինն անվանափոխել Հայաստանի Հանրապետության գլխավոր

դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին, իսկ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժինն անվանափոխել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությանն աջակցող բաժին:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ գլխավոր դատախազի՝ 2019 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 32-րդ կետի 1.5-րդ և 1.8-րդ ենթակետերը:

4. Հավելվածի 32-րդ կետը լրացնել նոր՝ 1.15-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.15) Սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն»:

5. Հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «16) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությանն աջակցող բաժին.»:

6. Հավելվածի 33-րդ կետի 19-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «19) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին.»:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

8. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

9. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազին, Երևան քաղաքի դատախազին, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, մարզերի, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. Կ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**